21.Մանուկյան Մարենտա	AB 0446965	ՀՀ, ք. Երևան, Տիգրան Պետրոսյան փող, 1-ին հանրակացարան
22.Մաթևոսյան Լուսինե	AC 0590859	ՀՀ, ք. Երևան, Զարյան 31տուն 21.6/4.5
23.Ոսկանյան Նատա	AF 0599968	ՀՀ, ք. Երևան, Դեմիրճյան 40, բն. 98
24.Կարաբիդ Բերշ Հարություն	ԺԱ 000390	ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի հանրակացարան, 1-ին մասնաշենք, 309 սենյակ
25.Համբարձումյան Հերմինե	AB 0454292	ՀՀ, ք. Երևան, Աերացիա 7 հանրակացարան, 34 սենյակ
26.Հարությունյան Վարվարա	AB 0404576	Երևան,
27.Մելլումյան Մերի	AK 0314093	ՀՀ, ք. Երևան, Մեքաստիայի 96, տուն 110
28.Սիմեոնյան Նորա	AB 0470553	ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի 2-րդ հանրակացարան, 1 մասնաշենք, 321 սենյակ
29.Զաքարյան Հեղինե	AB 0441332	ՀՀ, ք. Երևան, Աերացիա 42, բն. 2
30.Եղիազարյան Գայանե	AC 0531935	ՀՀ, ք. Երևան, Ռուբինյան 9, բն.2
31.Կարապետյան Անգելինա	AB0232545	ՀՀ, ք. Երևան, Ներքին Շենգավիթ 2-րդ հանրակացարան
32.Խաչատրյան Ավետիք	AG0604706	ՀՀ, ք. Երևան, Նորքի այգիներ 275 տ
33. Փիլյան Անահիտ	AC036241	ՀՀ, ք. Երևան, Կոնդ 148
34. Բաբասինա Աիդա	AB0351332	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ ՀԷԿ 16 շ.110 տ
35. Արևշատյան Անահիտ	AC0443444	ՀՀ, ք. Երևան, Կոնդ 41
36. Սորսումաթյան Աննա	6005212905	ՀՀ, ք. Երևան, Սարկավազի փ., տ. 67
37. Մխիթարյան Անահիտ		ՀՀ, ք. Երևան, Ներքին Չարբախ 7փ. տ. 37
38. Գևորգյան Աշխեն	AB0578050	ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/2 շ. Բն 3
39. Կարապետյան Արուսյակ		ՀՀ, ք. Երևան, Անդրֆեդերացիայի 52
40. Սահակյան Գայանե	AB0506149	ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/22., բն. 6
41. Մարգարյան Գոհար	AA365390	ՀՀ, ք. Երևան, Արդուրյան 29, 43 բն
42. Անանյան Գալինա	AF0317087	ՀՀ, ք. Երևան, Ներքին Շենգավիթ 1/2, բն 111
43. Աշուրյան Գայանե	AC0287359	ՀՀ, ք. Երևան, ՀԱԹ, Բ1 թաղ. 113շ, բն 25
44. Սևոբոդսկա Գալինա	AB067721	ՀՀ, ք. Երևան, Թոփեհասի խճ. 3/2

45. Մարտիրոսյան Դոնարա	AC0360867	
746. Գրիգորովա Ելենա	AC0418386	ՀՀ, ք. Երևան, Նորազյուղ <i>27-6/4.5</i>
47. Սիմոնյան Թերմինե	AB0663816	ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ.3/64
58. Սանթրոսյան Թամարա	AA0254120	ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/22., 206ա.
49. Հովհաննիսյան Իրինա	AF0661176	ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/2-5
50. Սիմոնյան Լուսինե	AF0479665	ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/22.
51. Տետրուաշվիլի Լիանա	AE0630722	ՀՀ, ք. Երևան, Գրիբոյեդով 112. 125 ա.
52. Հովհաննիսյան Կարինե	AC0628881	ՀՀ, ք. Երևան, գերյան 112, բն15
53. Պողոսյան Կարինե	AB0537932	ՀՀ, ք. Երևան, Չարենցի փ.71/2
54. Գասպարյան Հրանուշ	AC0595863	ՀՀ, ք. Երևան, Գ. Նժդեհի 302, բն5
55. Դանիելյան Հասմիկ	AB03367965	ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 42
56. Մկրտչյան Համեստ		ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 4, բն2
57. Հարությունյան Մուշեղ	AC0516409	ՀՀ, ք. Երևան, Վրացական 17-3
58. Դարբինյան Մարինե	AB0619560	ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 1-ին Ա 2. Բն 28
59. Գաբրիելյան Մարգար	AA0265847	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ ՀԷԿ, 192., 217 բն
60. Հովհաննիսյան Մերի	AE0262274	ՀՀ, ք. Երևան, Ավան Չարենցի փ. 112, 47 բն
61. Գրիգորյան Մարգարիտա	AC0241191	ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ 65փ. 127/2, 820 ա
62. Գրիգորյան Մարուսյա	AB0367918	ՀՀ, ք. Երևան, Յապյան 32., 44 բն
63. Եսայան Նելլի	AG0272620	ՀՀ, ք. Երևան, Նորազավիթ 4փ. Նրբ 1, տ.11
64. Ռյաբուխա Նանա		ՀՀ, ք. Երևան, Գրիբոյեդովի 11/12, 107ա.
65. Մարգարյան Նարինե	AF0939995	ՀՀ, ք. Երևան, Նորազյուղ 49
66. Սիմոնյան Նունե	AF0485865	ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/22. 66 բն
67. Շահինյան Շուշանիկ	AE0297965	ՀՀ, ք. Երևան, Շիրակի 21 փ. 19տ
68. Գրիկուրովա Ռուզաննա	AC0359549	ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի փ. 28տ.
69. Հակոբյան Սեդա		ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 47, բն 57
70. Գրիգորյան Եվգենիա	AC0405999	ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ 127/3, 143 ա.

Հիմնադրամի հիմնադիր և խորհրդի անդամ *Սեդա Հակոբյան*

ՆԱԽԱԳԻՏ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐԿ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— ապրիլի 2011 թվականի N Մ-
քաղ. երևան

27-6/4.6

-Ա

**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N/-11, ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ստացված բեռը (831 տեղ, 11567 կգ ընդհանուր քաշով, 531348 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 9175 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Մ-249-Ա (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա և 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա որոշումների խմբագրությամբ), 2010 թվականի մարտի 19-ի N Մ-177-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի NN Մ-043-Ա, Մ-044-Ա, Մ-045-Ա, Մ-046-Ա, Մ-047-Ա, Մ-048-Ա, Մ-049-Ա և Մ-050-Ա ու ապրիլի 1-ի N Մ-228-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում (բեռի և բաշխման ցանկը կցվում է):


2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Լոռու և Շիրակի մարզպետներին:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՃԻՆ 6/4.6

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից արված դիտողություններն ու առաջարկությունները ամբողջությամբ հաշվի են առնվել:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ռ Ա Դ Ա Ր Մ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ՃԻՆ 6/4.6

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

ՃԻՆ 04. ՃԻՆ Բ. № 3/3.8-Ճ/18005-11

Ձեռ. №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.04.2011թ. N15/15.6/6037-11 գրությամբ ներկայացված «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծին կից ներկայացված բեռների բաշխման ցանկը վերախմբագրել՝ ըստ շահառուներին հատկացվող բեռների տեսականու, քանակի, միավորի արժեքի, ինչպես նաև ընդհանուր արժեքը ներկայացնելով ըստ յուրաքանչյուր առանձին որոշմամբ հաստատված ծրագրի: Առաջարկում ենք հաշվի առնել վերոգրյալը նաև հետագայում հիմնադրամի կողմից իրականացվող մեկից ավելի ծրագրերի շրջանակներում բեռների ներմուծման որոշման նախագիծ ներկայացնելիս:

Միաժամանակ առաջարկում ենք որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև Երևանի քաղապետարանին, Շիրակի և Լոռու մարզպետարաններին:

Հարգանքով

Ա. Զանգուլազյան

034/12011-11
ՃԻՆ 04. ՃԻՆ Բ.

Ատոմ Զանգուլազյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 21.6/4.6

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7

Հեռ.

№ 11/3-6/2470-11
26.04.2011թ.

**ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. ապրիլի 19-ի համար 15/15.6/6037-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ որոշման նախագծին կից փաստաթղթերում բեռի ցանկը շատ ընդհանրացված է ներկայացված: Անհրաժեշտ է ներկայացնել բեռի մասնացուցակ:

Ա. ԱՆԱԿԵՐԴՅԱՆ

044/11775-11
26.04.2011թ.

կադրող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

21.6/4.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

12.05.2011թ. № 3/3.8-2/78693-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր 27.04.2011թ. N3/3.8-2/78005-11 գրության և հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն՝ պարոն Հրահատ Ստեփանյանի 05.05.2011թ. N 4-05/05 պատասխան գրությամբ ուղարկված բեռի բաշխման ցանկի լրամշակված տարբերակը, Ձեր 19.04.2011թ. N15/15.6/6037-11 գրությամբ ներկայացված «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ բեռի բաշխման ցանկի լրամշակված տարբերակում հաշվի չի առնվել մեր առաջարկությունը՝ ցանկում նշելու նաև շահառուներին հատկացվող բեռների տեսականին, քանակը, քաշը և արժեքը ըստ կոնկրետ ծրագրի: Կրկին առաջարկում ենք հետադարձ հիմնադրամի կողմից իրականացվող մեկից ավելի ծրագրերի շրջանակներում բեռների ներմուծման որոշման նախագիծ ներկայացնելիս հաշվի առնել վերոգրյալը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներմուծված բեռը ըստ հիմնադրամի կողմից վերը նշված N4-05/05 գրությամբ ուղարկված բաշխման ցանկի բաշխելիս պարզվում է, որ ՀՀ ԿԲԾՀՀ-ի 28.04.2006 թվականի N Մ-249-Ա որոշմամբ (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա և 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շահառուներին նախատեսվում է հատկացնել 327,600.00 ԱՄՆ

դրարին համարժեք 123,446,000.00 ՀՀ դրամ արժեքով բեռներ, մինչդեռ նշված ծրագրով նախատեսված է ընդամենը 52,800,000.00 ՀՀ դրամ բեռների ներմուծում և ներկայացված որոշման նախագծով նոր բեռների հատկացման դեպքում այն կգերազանցի ծրագրով նախատեսված համապատասխան ծախսերը 70,646,000 ՀՀ դրամ (123,446,000.00 - 52,800,000.00):

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք ՀՀ ԿԲԾՀ-ի 28.04.2006 թվականի N Մ-249-Ա որոշմամբ (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա և 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով նաև նախորդ տարիներին նույն ծրագրով արդեն ստացված և ներմուծվելիք բեռների արժեքը:

Հարգանքով



Ատոմ Զանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/14015-11

12.03.2011 թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 41.6/4.6

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ 11/3-6/2896-11
05.10.2011 թ

«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի
գործադիր տնօրեն պարոն Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

Պատճենը՝ ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին» որոշման նախագծի վերաբերյալ ս/թ. մայիսի 5-ի համար Կ-05/05 գրության՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված պարզաբանումները բավարար չեն, քանի որ կից փաստաթղթերում բեռի ցանկը շատ ընդհանրացված է ներկայացված: Մասնավորապես՝ պարզ չէ, թե ինչ են իրենցից ներկայացնում <<կենցաղային պարագաներ>>, <<անկողնային պարագաներ>>, <<հիգիենիկ պարագաներ>> արտահայտությունները և այլն: Անհրաժեշտ է ներկայացնել բեռի մասնացուցակ:



Ա. ԱՆԱԿԵՐԴՅԱՆ

044/13635-11

10.03.2011 թ

Կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

21.6/4.6

« 21 » 04 2011 թ.

N 84/462/՝ 5/3292-11

Ձեռք 2011-04-19, 15/15.6/6037-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌ-ԴԱ»
բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում բեռի
ներմուծման մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը
վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Ֆ. Բերիկյան

040/4583-11
21.04.2011թ.

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.56-34-91

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21.6/4.7

___ ապրիլի 2011 թվականի N Մ- -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 28-Ի N Մ-249-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-182-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի ապրիլի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության աշխարհների և
սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N/-11 ու Հայաստանի Հանրապե-
տության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի ապրիլի -ի
N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները, որոշում է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի «ԱՌ-ԴԱ» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեկեցիկ մանկություն և ծերություն - 2» ծրագրի
մասին» N Մ-249-Ա որոշման (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա և 2010
թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա որոշումների խմբագրությամբ) մեջ և կից ծրագրում
կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշման 1-ին կետում «63630000 դրամ» բառերը փոխարինել «271430000 դրամ»
բառերով.
- 2) որոշմանը կից ծրագրի 9-րդ կետի երկրորդ և 10-րդ կետի երրորդ պարբերու-
թյուններում «45.0 մլն դրամ» բառերը փոխարինել «245.0 մլն դրամ» բառերով.
- 3) որոշմանը կից ծրագրի 12-րդ կետում «63.63 մլն դրամ» բառերը փոխարինել
«271.43 մլն դրամ» բառերով:

21-6/4.7

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ստացված բեռը (233 տեղ, 4812 կգ ընդհանուր քաշով, 91827 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7475 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեկեցիկ մանկություն և ծերություն - 2» ծրագրի մասին» N Մ-249-Ա որոշմամբ (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա և 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա որոշումների խմբագրությամբ) և 2010 թվականի մարտի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ձեյթուն» ուսումնական և աջակցման կենտրոնի հիմնադրում» ծրագրի մասին» N Մ-182-Ա որոշմամբ հաստատված ծրագրերի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

21-6/4.7

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից արված դիտողություններն ու առաջարկությունները ամբողջությամբ հաշվի են առնվել:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Ք - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

21-6/4.7

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

27.04.2011թ. № 3/3.8-ձ/8054-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 19.04.2011թ. N15/15.6/6093-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Մ-249-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Մ-249-Ա որոշմամբ (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա և 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում նախատեսված է ընդամենը 52,800,000.00 ՀՀ դրամ բեռների ներմուծում, որն սպառվել է և նոր բեռների ներմուծման դեպքում այն կգերազանցի ծրագրով նախատեսված համապատասխան ծախսերը,

- բեռների բաշխման շահառուների ցուցակում ընդգրկված, «Ձեյթուն» ուսումնական կենտրոնը, «Առդա» բարեգործական հիմնադրամը և «Վանաձորի բնակարաններ» կոչվող շահառուները ընդգրկված չեն ՀՀ կառավարության ԲԾՀՀ-ի 28.04.06թ. NՄ-249-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շահառուների ցանկում: Նշված չէ նույն ցանկում ընդգրկված կարիքավոր քաղաքացիների բնակության տարածաշրջանը, ինչպես նաև

20.6/4.7
պարզաբանված չէ «Վանաձորի բնակարաններ»-ում ապրող բարեգործություն ստացող ընտանիքների ընտրության սկզբունքը և չափանիշները,


- նշված չէ բեռների բաշխման ցանկում նշված Վանաձորի համայնքային կենտրոնի լրիվ անվանումը և իրավական կարգավիճակը, ինչպես նաև անհասկանալի է խոհանոցային պարագաների և ավտոմեքենայի մասերի հատկացումը «Առդա» բարեգործական հիմնադրամին:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ ներկայացված որոշման նախագիծը բարեգործական որակման ենթակա չէ:

Հարգանքով



Աստու Զանցուղազյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

20.6/4.7
12.05.2011թ. № 3/3.8-2/78751-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր 26.04.2011թ. N3/3.8-2/78054-11 գրության և հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն՝ պարոն Հրահատ Ստեփանյանի 04.05.2011թ. N4-04/05 պատասխան գրությամբ ուղարկված պարզաբանումը, Ձեր 19.04.2011թ. N15/15.6/6093-11 գրությամբ ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Մ-249-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Մ-249-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում նախատեսված է ընդամենը 52,800,000.00 ՀՀ դրամ բեռների ներմուծում, որն սպառվել է և քննարկման փուլում գտնվող վերջին երկու որոշման նախագծերով նախատեսված 160,865,000.00 ՀՀ դրամ գումարով (123,446,020.00 + 37,418,980.00) նոր բեռների ներմուծման դեպքում այն կգերազանցի ծրագրով նախատեսված համապատասխան ծախսերը 108,065,000.00 դրամով (160,865,000.00 - 52,800,000.00): Ռիստի անհրաժեշտ է ՀՀ ԿԲԾՀՀ-ի 28.04.2006 թվականի N Մ-249-Ա որոշմամբ (2007 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-902-Ա և 2010 թվականի օգոստոսի 20-ի N Մ-570-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝

034/12120-11
27.04.2011թ.

հաշվի առնելով նաև նախորդ տարիներին նույն ծրագրով արդեն ստացված և ներմուծվելիք բեռների արժեքը,

ՀՐ-6/4.7

- ներկայացված որոշման նախագծում սահմանվել է, որ հիմնադրամի հասցեով ստացված բեռը ներմուծվում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Մ-249-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում; սակայն հիմնադրամի պատասխան գրության մեջ նշվում է, որ բեռների բաշխման շահառուների ցուցակում ընդգրկված «Ձեյթուն» ուսումնական կենտրոնին համակարգիչները տրամադրվում են ՀՀ ԿԲԾՀՀ-ի 19.03.2010թ. N Մ-182-Ա որոշման շրջանակներում: Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք ներկայացված որոշման նախագիծը վերախմբագել հղում կատարելով նաև ՀՀ ԿԲԾՀՀ-ի 19.03.2010թ. N Մ-182-Ա որոշմանը, միաժամանակ ճշգտելով բեռների բաշխման ցանկը՝ հստակեցնելով շահառուների անվանումը և նշելով նրանց հատկացվող բեռների տեսականին, քանակը, քաշը և արժեքը ըստ կոնկրետ ծրագրերի:

Հարգանքով



Ասողմ Զանցուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

034/14095-11
12.05.2011թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱՆ

ՀՐ-6/4.7

« 21 » 04 2011 թ.

N 81/ԱՁՀՀ-5/3291-11

Ձեռ 2011-04-19, 15/15.6/6093-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 28-ի N Մ-249-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝



Ֆ. Բերիկյան

040/11581-11
21.04.2011թ

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.525-893

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 <http://www.mss.am>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 20-6/4.7

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ ՄԱ/3-6/2480-11
26.04.2011թ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Սույն թվականի ապրիլի 19-ի թիվ 15/15.6/6093-11 գրությամբ Ձեր կողմից կարծիքի ներկայացված «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 28.04.2006թ. թիվ Մ-249-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա.ԱՆԱՎԵՐԴՅԱՆ

044/11797-11
26.04.2011թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ
2011 թվականի Մ -
քաղ. երևան

- Ա 20-6/5.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի Մ-092-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2011» ծրագրի մասին» Մ-092-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սիս արթ ընդ գրաֆիկա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00095704) 2011 թվականի մայիսի 6-ին կնքված՝ N Ծ-06/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 500 հատ կաշվե թևնոցի և 300 հատ օրգանական ապակուց հուշանվերի պատրաստում՝ 550000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

21.6/5.1

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.05.11 № 3/3.8-1/78636-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.05.11թ. N 15/15.1/7359-11 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ.
փետրվարի 18-ի N Մ-092-Ա (<<Հայաստան>> համահայկական հիմնադրամ) որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի (<<Սիս արթ ընդ գրաֆիկա>> ՍՊԸ-ի հետ
կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղայան

034/13826-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 21.6/5.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

144/3-4/2922-11

10.05.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 06.05.2011թ. թիվ 15/15.1/7359-11 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Մ-092-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան»
համահայկական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Ա. Աղալերյան

044/13804-11

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ մայիսի 2011 թվականի N Մ-
քաղ. Երևան

-Ա

4.6/5.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, ի հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի -ի N 3/3-4/11
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի
ներկայացուցչության կողմից (<< քաղ. Երևան, Մարշալ Բաղդամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն
կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործա-
կան ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող
«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում»
ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա
համար ունի զգալի նշանակություն՝

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500241) 2011 թվականի ապրիլի 26-ին
կնքված՝ N ԵՆ ԾԳ 34/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախա-
գծանախահաշվային աշխատանքների իրականացում՝ 416667 դրամի չափով, առանց
ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Ն - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4.6/5.2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.05.2011թ. № 3/3.8-1/78634-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.05.11թ. N 15/15.6/7141-11 գրության՝ կապված <<
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ.
փետրվարի 18-ի N Մ-041-Ա (<<Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի
ներկայացուցչություն>>) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին
որոշման նախագծի (<<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում
ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ
չունենք:

Հարգանքով

Կ. Ե. Ե.

Ատոմ Զանցուղազյան

034/13824-11
10.05.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 21.6/5.2

0015, Երևան, Մ. Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05

N: ՌՌԿ/3-4/2919-11
10.05.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.05.2011թ. թիվ 15/15.6/7141-11 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի ՈՒ-041-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին(Հայկական
բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման
նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Աղալեռյան

044/13806-11
10.05.2011թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2011 թվականի Մ- -Ա 21.6/5.3
բաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱՔԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄՆԱԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011
թվականի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Սահմանել, որ «Արաքիկ» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի
կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն
կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաքիկ» միացյալ
մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին
իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական
զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

«Մագնոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2011 թվականի ապրիլի 28-ին
կնքված՝ N 14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Արաքիկ» ԲՀ-
ԵԴՄԻ Արտաշատի վերականգնողական կենտրոնի համար երկու տաղավարների
պատրաստում և տեղադրում՝ 460000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների
կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԵՏ

21-6/5.3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

11.05.11 № 3/3.8-1/78664-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.05.11թ. N 15/15.1/7138-11 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009թ.
հունվարի 30-ի N Մ-032-Ա (<<Արաբկիր>> միացյալ մանկական բարեգործական
հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման
նախագծի (<<Մագնոն>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր) վերաբերյալ հայտնում ենք, որ
մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան

034/13956 - 11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 21-6/5.3

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

66/3-4/2917-11

10.05.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.05.2011թ. թիվ 15/15.1/7138-11 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի ՄՄ-032-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (<<Արաբկիր>> միացյալ
մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Ա. Աղվերդյան

Անտղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/13803-11

ՆԱԽԱԳԻԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2011 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա **41-6/5.4**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՐԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ. ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/-11 գրությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նատալի ֆարմ ՍՊԸ-ի հետ (<ՎՀՀ՝ 01222567) 2011 թվականի ապրիլի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թունաքիմիկատների մատակարարում՝ 1072487 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Մ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

41-6/5.4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

11.05.11 № 3/3.8-1/78663-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.05.11թ. N 15/15.1/7153-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա (<<Սի. Օ. ԷՅ. ԷՖ.>> մանուկների բարեգործական հիմնադրամ>>) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի (<<Նատալի ֆարմ>> ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

034/13957-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 4-6/5-4

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԼՔԼ/3-4/2853-11
6.05.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.05.2011թ. թիվ 15/15.1/7153-11 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի ՈՒ-935-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սի. Օ. Էյ. Էֆ.»
մանուկների բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ
հայտնում եմ.

Քանի որ վերոնշյալ ծրագրի շրջանակներում թունաքիմիկատների ձեռք
բերում նախատեսված չէ, ուստի անհրաժեշտ եմ համարում ներկայացնել
համապատասխան պարզաբանումներ՝ կից ներկայացված «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի
հետ կնքված գործարքը որպես ծրագրին հարակից գործարք որակելու համար:

Ա. Աղաջանյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/43526-11

4-6/5-4

11 մայիսի 2011թ.

COAF 1654

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերը
համակարգող հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի ՈՒ-935-Ա
որոշմամբ հաստատված Սի.Օ.Էյ.Էֆ. Մանուկների բարեգործական հիմնադրամի «ՀՀ
Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի շրջանակներում կնքված «Նատալի
ֆարմ» ՍՊԸ-ի պայմանագիրը, որով նախատեսվում է ձեռք բերել 1,072,487 (մեկ
միլիոն յոթանասուներկու հազար չորս հարյուր ութսունյոթ) ՀՀ դրամ արժողությամբ
թունաքիմիկատներ:

Ի պատասխան ՀՀ կառավարության առընթեր Պետական եկամուտների կոմիտեի
նախագահի տեղակալ պարոն Ա.Ավալերյանի 06/05/2011թ. N ԱԱ(3-4)2853-11
գրության, ներկայացնում եմ պարզաբանումներ.

Սի.Օ.Էյ.Էֆ Մանուկների բարեգործական հիմնադրամը թունաքիմիկատների գնումն
իրականացնում է «ՀՀ Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի 6-րդ կետի 1-3
պարբերությունում նշված Մեքենատրակտորային պարկ կետի շրջանակներում: Այս
կետով նախատեսվում է Արտենի համայնքում մեքենատրակտորային կայանի
հիմնադրում, որն էլ բաղկացած է 3 հիմնական բաղադրիչներից՝

1. Տրակտորային կայան վարող տրակտորով,
2. Տրակտորների և կոմբայների վերանորոգման արհեստանոց
համապատասխան սարքավորումներով ու գործիքներով, և
3. Բույսերի պաշտպանության կայան՝ տրակտորով, սրսկիչով և
բուժանյութերով՝ արտերի ու պտղատու այգիների առաջին սրսկման համար:

Թունաքիմիկատների և բուժանյութերի գնումը «Նատալի ֆարմ» ընկերությունը
նախատեսվում է 3-րդ կետի իրականացման համար, քանի որ նորաստեղծ-բույսերի

Ստորագրված է 05.05.2011 թ. 094/11028


պաշտպանության կայանը դեռևս չունի բավարար սեփական միջոցներ անհրաժեշտ քանակության թունաքիմիկատներ ու բուժանյութեր գնելու համար:

Խնդրում եմ պայմանագիրը համարել «ՀՀ գյուղական համայնքերի զարգացում» ծրագրի հարակից գործարք և ազատել ԱԱՀ-ից:

21. 6/5. 4

Կից ներկայացվում է նաև մանրամասն տեղեկություն գնվող թունաքիմիկատների քանակների և արժեքների մասին (Հավելված 1):

Առդիր՝ 5 էջ:



Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Մի. Օ. Էյ. Էֆ.» ՍՔՀ)» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե – 6.05.11, N ԱԱ/3-4/2853-11	
1. Նշված ծրագրի շրջանակներում թունաքիմիկատների ձեռքբերում նախատեսված չէ:	1. Կցված է կազմակերպության պարզաբանումը

21-6/5. 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԻՇ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
մայիսի 2011 թվականի N Մ - - Ա
քաղ. երևան

41-6/5.5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2011 թվականի ապրիլի -ի N 3/3.8-1/11 և Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011
թվականի ապրիլի -ի N ԱԱ/3-4/11 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական
ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ
պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման
խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 11-րդ կետում «Բաղրամյան 18 հասցեում գտնվող
Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի
բարեսիրական կենտրոնի գլխավոր մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ
121600000 / հարյուր քսան մեկ միլիոն վեց հարյուր հազար դրամի առանց ԱԱՀ-ի» բառերը
փոխարինել «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի
մասնաճյուղին պատկանող բարեսիրական կենտրոնների, մանկապարտեզների կամ
ճամբարների նորոգման աշխատանքներ 121600000 / հարյուր քսան մեկ միլիոն վեց հարյուր
հազար դրամի առանց ԱԱՀ-ի» բառերով:

2. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղի կողմից (<ՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է վերոնշյալ ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդա Կոնստրաքշն ԹԻ ընդ ԹԻ» ՍՊԸ-ի հետ (<ՎՀՀ՝ 01011141) 2011 թվականի
ապրիլի 12-ի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնանորոգման
